ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՍԵՎԾՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՊԵՍ ԴՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՁԵՎԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սեւծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) մասնակից պետությունների
կառավարությունները՝ Ալբանիայի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը,
Ադրբեջանի Հանրապետությունը, Բուլղարիայի Հանրապետությունը, Վրաստանը,
Հունաստանի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռումինիան,
Ռուսաստանի Դաշնությունը, Թուրքիայի Հանրապետությունը, Ուկրաինան, այսուհետ՝
"Կողմեր",

գիտակցելով, որ ազգային եւ միջազգային հանցավորությունը իր բոլոր ձեւերով
լուրջ վտանգ է հանդիսանում մարդկային բարեկեցության, անվտանգության եւ
առողջության համար, ինչպես նաեւ վնաս է հասցնում հասարակության տնտեսական,
մշակութային եւ քաղաքական հիմքերին,

խորապես գիտակցելով ընդհանուր առմամբ հանցավորության զարգացման
մասշտաբներն ու միտումները,

ի գիտություն ընդունելով թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի
միջազգային ապօրինի շրջանառության, ահաբեկչության եւ կազմակերպված
հանցավորության միջեւ սերտ կապի դեպքերը,

հաշվի առնելով հանցավորության կանխարգելման եւ վերահսկման ոլորտին
վերաբերող ՄԱԿ-ի փաստաթղթերի դրույթները եւ, հատկապես, այն փաստաթղթերը, որոնք
վերաբերում են կազմակերպված հանցավորությանը, թմրամիջոցների եւ հոգեներգործուն
նյութերի, զենքի եւ ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառությանը, բոլոր
ահաբեկչական գործողություններին, ինչպես նաեւ միգրացիայի հետ կապված հանցավոր
գործունեությանը,

հաշվի առնելով 1995 թվականի հունիսի 30-ին Բուխարեստում ընդունված ՍԾՏՀ
մասնակից պետությունների բարձր մակարդակով հանդիպման Հայտարարության
դրույթները, 1996 թվականի հունիսի 12-ի ՍԾՏՀ Խորհրդարանական Ասամբլեայի
15/1996 հրահանգները կազմակերպված հանցավորության դեմ պայքարում ՍԾՏՀ
Խորհրդարանական Ասամբլեայի մասնակից պետությունների համագործակցության մասին,

1996 թվականի հոկտեմբերի 17-ին Երեւանում կայացած ՍԾՏՀ մասնակից
պետությունների ներքին գործերի նախարարների առաջին հանդիպման ընթացքում
ընդունված Համատեղ Հայտարարությունը, որը հավանության է արժանացել ՍԾՏՀ
մասնակից պետությունների եւ կառավարությունների ղեկավարների կողմից 1996
թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում, եւ 1997 թվականի հոկտեմբերի 22-ին

Ստամբուլում կայացած ներքին գործերի նախարարների երկրորդ հանդիպման Համատեղ
Հռչակագիրը,
կարեւորելով միջազգային համագործակցությունը հանցավորության դեմ պայքարի
ոլորտում եւ ցանկանալով միմյանց ցուցաբերել հնարավորին չափ լայն եւ
արդյունավետ աջակցություն՝ պատշաճորեն պահպանելով մարդու համընդհանուր
իրավունքներն ու ազատությունները,
ընդգծելով հանցավորության դեմ պայքարի իրականացման կարեւորությունը՝ հաշվի
առնելով գլոբալ եւ տարածաշրջանային մակարդակներով ձեռնարկվող համապատասխան
գործողությունները,
ելնելով իրավահավասարության եւ փոխշահավետության սկզբունքներից,
հարգելով ՍԾՏՀ մասնակից պետությունների միջազգային համաձայնագրերը եւ
ազգային օրենսդրությունները եւ չխոչընդոտելով երրորդ պետության հետ երկկողմ եւ
բազմակողմ համաձայնագրերով մինչ այդ ստանձնած պարտավորություններին,
համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Համագործակցության ոլորտներ

Կողմերը կհամագործակցեն հանցագործությունների կանխարգելման, խափանման,
հայտնաբերման, բացահայտման, հետաքննության եւ նախաքննության ոլորտներում,
հատկապես.
- ահաբեկչության ակտերի,
- կազմակերպված հանցավորության,
- թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի ապօրինի աճեցման,
արտադրության, պատրաստման եւ շրջանառության,
- թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի անօրինական արտադրության
համար պրեկուրսորների եւ հիմնական քիմիական նյութերի ապօրինի արտադրության,
անօրինական առեւտրի եւ օգտագործման,
- զենքի՝ ներառյալ կենսաբանական, քիմիական եւ ռադիոլոգիական զենքը,
ռազմամթերքի, պայթուցիկ, միջուկային եւ ռադիոակտիվ նյութերի, ինչպես նաեւ
թունավոր նյութերի ապօրինի շրջանառության,
- միջազգային անօրինական տնտեսական գործունեության եւ հանցավոր
գործունեության արդյունքում ստացված եկամուտների օրինականացման (փողերի
լվացում), տնտեսական եւ բանկային կասկածելի գործարքների, ներդրումների
ոլորտում չարաշահումների,
- մաքսանենգության,
- միգրացիայի, սահմանի անօրինական անցման եւ մարդկանց անօրինական
տեղափոխման հետ կապված հանցավոր գործունեության,
- կանանց եւ անչափահասների կամ երեխաների սեռական շահագործման,
- թղթադրամի, վարկային քարտերի, փաստաթղթերի, արժեթղթերի եւ այլ

արժեքների, ինչպես նաեւ անձը հաստատող ցանկացած փաստաթղթերի կեղծման,
- մարդկային կյանքի եւ սեփականության դեմ ուղղված բռնի հանցագործությունների,
- պատմական եւ մշակութային ժառանգության առարկաների, արվեստի գործերի,
թանկարժեք քարերի եւ մետաղների, մտավոր սեփականության, ինչպես նաեւ այլ թանկարժեք իրերի ապօրինի շրջանառության,
- կոռուպցիայի,
- էկոլոգիական հանցագործությունների,
- բարձր տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվող հանցագործությունների, այդ թվում համակարգչային հանցագործությունների,
- մարդկանց առեւանգման եւ նրանց ներքին օրգանների առեւտրի,
- ծովային հանցագործությունների (խարդախություն, ծովահենություն եւ այլն),
- տրանսպորտի հափշտակման եւ անօրինական շրջանառության
2. Կողմերը կհամագործակցեն նաեւ հետեւյալ բնագավառներում.
- կադրերի նախապատրաստում, ուսուցում եւ որակավորման բարձրացում,
- մշակութային, սպորտային եւ սոցիալական բնագավառներում համագործակցություն՝ պատվիրակությունների փոխանակման միջոցով,
- տեղեկատվական համակարգերի, կապի միջոցների եւ հատուկ տեխնիկայի զարգացման եւ հանցավորության դեմ պայքարի նպատակով գիտական հետազոտությունների անցկացում,
- համագործակցություն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում, ամբողջությամբ հանցավորության վերահսկման եւ հանցագործությունների կանխարգելման նպատակով անհայտ կորած անձանց, գողացված կամ կորցված առարկաների հայտնաբերման եւ դիակների ճանաչման միջոցով

ՀՈԴՎԱԾ 2
Համագործակցության ձեւերը

Կողմերի միջեւ համագործակցությունը կարող է իրականացվել, մասնավորապես՝
- ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տեղեկատվության եւ փորձի փոխանակման միջոցով,
- անդրազգային հանցավորության ցանկացած ձեւերի, հատկապես, ահաբեկչական գործողությունների, կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի, զենքի եւ ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության, միգրացիայի հետ կապված հանցավոր գործունեության կանխարգելման եւ խափանման նպատակով տեղեկատվության՝ ներառյալ անդրազգային հանցավորության մեջ ընդգրկված անձանց եւ հանցավոր ցանցերի մասին տեղեկատվության փոխանակման միջոցով,
- հանցավոր ցանցերի դեմ ուղղված համակարգված միջոցների ծրագրավորման եւ

ընդունման միջոցով,
- քննությունից կամ դատավճռի կատարումից խուսափող, ինչպես նաեւ անհայտ
կորած հայտարարված անձանց հետախուզման միջոցով,
- հանցագործությունների նոր տեսակներին, դրանց կանխարգելման, խափանման,
բացահայտման եւ հետաքննության ու նախաքննության մեթոդներին եւ ձեւերին
վերաբերող տեղեկատվության փոխանակման միջոցով,
- տնտեսական եւ բանկային կասկածելի գործարքների, ներառյալ հանցավոր
ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման բացահայտման գործում օգնություն
ցուցաբերելու միջոցով,
- քրեագիտական եւ քրեաբանական հետազոտություններում գիտական եւ
տեխնոլոգիական մեթոդների օգտագործման վերաբերյալ փորձի փոխանակման միջոցով,
հատկապես, թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի եւ պրեկուրսորների
ուսումնասիրման, հայտնաբերման եւ վերահսկման բնագավառներում՝ միջազգային
իրավունքի համաձայն,
- թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի փոխադրման, թաքցման եւ
տարածման համար օգտագործվող մեթոդների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման
միջոցով,
- մաքսանենգության, հատկապես, թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի
մաքսանենգության կանխարգելման նպատակով իրենց սահմանների վրա անհրաժեշտ
իրավական, վարչական եւ անվտանգությունն ապահովող միջոցների ձեռնարկման
միջոցով,
- ապօրինի շրջանառության մեջ գտնվող թմրամիջոցների եւ հոգեներգործուն
նյութերի նոր տեսակների, դրանց պատրաստման համար օգտագործվող տեխնոլոգիաների
եւ նյութերի, ինչպես նաեւ թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի անալիզի
եւ նույնականացման մեջ օգտագործվող հետազոտությունների նոր մեթոդների մասին
տեղեկատվության փոխանակման միջոցով,
- թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության հետ
կապ ունեցող ահաբեկչության եւ կազմակերպված հանցավորության դեպքերին վերաբերող
տեղեկատվության փոխանակման միջոցով,
- ելքի կեղծ փաստաթղթերի հայտնաբերման եւ հանցագործությունների, հատկապես,
ահաբեկչական գործողությունների, ինչպես նաեւ անօրինական միգրացիայի հետ կապված
գործունեությանը մասնակցելու մեջ կասկածվող անձանց անօրինական մուտքը կանխելու
նպատակով՝ սահմանային հսկողության, ինչպես նաեւ հսկողություն իրականացնող
իրավասու ծառայություններին նյութական եւ տեխնիկական աջակցություն

ցուցաբերելու բնագավառներում տեղեկատվության, տվյալների եւ փորձի փոխանակման
միջոցով,

- աշխատանքային փորձի փոխանակման, այդ թվում որակավորման բարձրացման դասընթացների, խորհրդակցությունների, սեմինարների եւ ուսումնական դասընթացների անցկացման միջոցով,
- սույն Համաձայնագրում նշված ոլորտներին վերաբերող վիճակագրական տվյալների, ինչպես նաեւ ազգային իրավական ակտերի եւ դրույթների, բրոշյուրների, հրապարակումների եւ գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակման միջոցով,
- ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող անհետաձգելի եւ հատուկ հարցերի քննարկման անհրաժեշտության դեպքում, իրենց իրավասությունների շրջանակներում, փորձագետների հանդիպումների կազմակերպման եւ անցկացման միջոցով,
- ազգային օրենսդրությանը համապատասխան համարներ կամ յուրահատուկ տարբերակիչ նշաններ ունեցող գողացված առարկաների, այդ թվում մշակութային եւ պատմական արժեքների, ավտոտրանսպորտի եւ հրազենի, ինչպես նաեւ համարակալված արժեթղթերի եւ անձնագրերի (անձը հաստատող փաստաթղթեր) հետախուզման եւ վերադարձման միջոցով, իրենց պետությունների տարածքում հանցագործություն կատարելու համար դատապարտված մյուս Կողմերի պետությունների քաղաքացիների, ինչպես նաեւ քննության տակ գտնվող անձանց մասին տեղեկատվության փոխանակման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 3
Վերահսկվող մատակարարումներ

Կողմերը, համապատասխան իրենց ազգային օրենսդրությանը եւ միջազգային պարտավորություններին, կապահովեն անհրաժեշտ պայմաններ՝ իրականացնելու թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի, ինչպես նաեւ դրանց արտադրության մեջ օգտագործվող պրեկուրսորների վերահսկվող մատակարարումները:

Կողմերը կքննարկեն ապօրինի շրջանառության մեջ գտնվող այլ օբյեկտների նկատմամբ վերահսկվող մատակարարումների մեթոդի կիրառման հնարավորությունը:

Կողմերը կձգտեն ներդաշնակեցնել իրենց օրենսդրությունները եւ փորձը՝ անհրաժեշտ ժամանակահատվածում արդյունավետ վերահսկվող մատակարարումներ իրականացնելու համար համատեղելիության հասնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4
Համագործակցության միջոցները

Կողմերը կհամագործակցեն հանցավորության դեմ պայքարում իրենց իրավասու մարմինների միջոցով՝ համաձայն սույն Համաձայնագրի դրույթների, եւ պահպանելով իրենց պետությունների օրենսդրությունը եւ ստանձնած միջազգային պարտավորությունները Կողմերը կորոշեն իրենց իրավասու մարմինները եւ/կամ հաղորդակցման կետերը, որոնց միջոցով կիրականացվի ուղիղ կապ եւ անհրաժեշտության դեպքում կփոխանակեն կապը իրականացնող պաշտոնյաները:

Յուրաքանչյուր Կողմ, Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում, Ավանդապահին կներկայացնի իրավասու մարմինների եւ/կամ հաղորդակցման կետերի ցանկը: Իրավասու մարմինների եւ/կամ հաղորդակցման կետերի ցանկում տեղի ունեցած փոփոխությունների մասին Կողմերը կտեղեկացնեն Ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 5
Հարցում համագործակցության վերաբերյալ

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի շահագրգիռ Կողմերի իրավասու մարմինների կողմից ներկայացված համագործակցության համար հարցումների հիման վրա:

Համագործակցության համար հարցումները պետք է ներկայացվեն գրավոր: Արտակարգ իրավիճակների դեպքերում, հարցումները կարող են կատարվել բանավոր, սակայն դրանք երեք օրվա ընթացքում պետք է հաստատվեն գրավոր՝ օգտագործելով կապի տեխնիկական միջոցները:

Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվել հարցման կատարումից, եթե դրա կատարումը վնաս է հասցնում իր պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ այլ հիմնական շահերին, կամ հակասում է իր պետության օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին: Համագործակցության համար հարցման կատարումը մերժելու մասին հարցում կատարող Կողմը տեղեկացվում է անհապաղ:

Կողմերի իրավասու մարմինները կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համագործակցության համար հարցման պատշաճ եւ ամբողջական կատարումը:

ՀՈԴՎԱԾ 6
Աշխատանքային խումբ

Կողմերը կհիմնեն Աշխատանքային խումբ՝ սույն Համաձայնագրով նախատեսված

համագործակցության իրականացման եւ խրախուսման ձեւերի քննության եւ սույն
Համաձայնագրի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունների կամ նոր միջազգային
Համաձայնագրերի, ինչպես նաեւ հանցավորության դեմ պայքարի ոլորտում
համագործակցության ընդհանուր ինստիտուտների ստեղծման անհրաժեշտության մասին
առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 7
Լեզուներ

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ապահովման նպատակով
Կողմերի իրավասու մարմինները գրավոր ընթացակարգեր իրականացնելիս կօգտվեն
անգլերեն լեզվից, իսկ բանավոր ընթացակարգերի դեպքում՝ անգլերեն եւ ռուսերեն
լեզուներից, մինչեւ Կողմերի կողմից այլ համաձայնության ձեռք բերումը:

ՀՈԴՎԱԾ 8
Ծախսեր

Յուրաքանչյուր Կողմ ինքնուրույն կհոգա սույն Համաձայնագրի կատարման
ընթացքում առաջացած ծախսերը, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում չորոշվի այլ
կարգ:

ՀՈԴՎԱԾ 9
Համաձայնագրի կիրառումը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է յուրաքանչյուր Կողմի պետության
օրենսդրության համաձայն:
Սույն Համաձայնագիրը չպետք է հակասի Կողմերի միջազգային այլ
պարտավորությունների կատարմանը:
Սույն Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկատվությունն ու
փաստաթղթերը կպահվեն գաղտնի, եթե դա պահանջվում է, եւ կօգտագործվեն հաղորդող
Կողմի կողմից որոշված նպատակներով: Սույն Համաձայնագրի հիման վրա ստացված
փաստաթղթերն ու տեղեկատվությունը չեն փոխանցվի երրորդ Կողմին առանց դրանք
հաղորդող Կողմի նախնական համաձայնության:
Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ընթացքում
առաջացող տարաձայնությունները Կողմերը կլուծեն խորհրդակցությունների միջոցով՝
համաձայն միջազգային իրավունքի համապատասխան կանոնների:

ՀՈԴՎԱԾ 10
Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագրի Ավանդապահն է հանդիսանում Մշտական Գործող Միջազգային Քարտուղարությունը (PERMIS): Սույն Համաձայնագրի անգլերեն լեզվով միակ բնօրինակը կփոխանցվի Մշտական Գործող Միջազգային Քարտուղարությանը, որը յուրաքանչյուր Կողմին կուղարկի դրա հաստատված պատճենը:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Ավանդապահին վավերացման կամ հավանության արժանացնելու մասին երրորդ փաստաթղթի հանձնման օրվանից 30 օր հետո:

3. Սույն Համաձայնագիրը վավերացրած կամ հավանության արժանացրած յուրաքանչյուր Կողմի համար, այն ուժի մեջ կմտնի տվյալ Կողմի կողմից վավերացման կամ հավանության արժանացնելու մասին երրորդ փաստաթղթի հանձնման օրվանից 30 օր հետո:

4. Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով Մշտական Գործող Միջազգային Քարտուղարություն (PERMIS): Դուրս գալը կիրականացվի Մշտական Գործող Միջազգային Քարտուղարության կողմից այդ մասին ծանուցում ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

5. Յուրաքանչյուր Կողմ կարող է առաջարկել սույն Համաձայնագրում կատարելու լրացումներ եւ փոփոխություններ:

Այդպիսի լրացումներն ու փոփոխությունները կընդունվեն բոլոր Կողմերի համաձայնության դեպքում եւ ուժի մեջ կմտնեն համաձայն սույն Հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ի հաստատումն որի, ներքոստորագրյալները, լինելով պատշաճ լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Կեռկիռայում 1998 թվականի հոկտեմբերի 2-ին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 2-ից: